


Պ. Ս. Ս. Ն. Բ.

Ն. Ս. Ս. Լ.

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան 12 թր.
Ներքին 6 թր.
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Ներքին 14 թր.
Ներքին 7 թր.
ԱՄԵՐԻԿԱ
Ներքին 2.60 Տօր.
Ներքին 1.50 Տօր.
Ներքին



Redaction du Journal

«Iraounk»

(Bulgarie) VARNA

Редакция

«ВѢСТНИКЪ

«Иравуни»

ВАР. А

Գրողները եւ չեն տրոհիր

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Լ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅՐԻԿ ՎԱՌՃԱՆԱԾ

Բնորոշողը կեն հեռագրական գործա-
կարության հաղորդում հեռագրա-
կար մը գուժեց իրեն հայրկի, Ա-
մենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին
մասը:

Որչափ որ տակաւին պաշտօնական
աղբիւրներէ չէ հաղորդուած մեզ այս
պարագային շատ կարեւոր չէ.
քանի որ գրեթէ թէ ժամա-
նակ մը ի վեր Հայոց սիրեցեալ Հայ-
րիկ խիստ տկարացած եւ վերջերս
անկողին ինկած էր:

Հակառակ իր յառաջացեալ տարի-
քին՝ Անոր պարթեւական հսկայ ու
տոյժ կազմը սակաւին պիտի կրնար
տակալ տանեալ մը տարինն ապրե-
լու եւ հովուելու համար իր սիրական
հոգը, եթէ տարուէ տարի նորագոյն
գործողութիւններ ընկճած չըլլային
Անոր այնչափ զգայուն սիրտը եւ պար-
տաւած Անոր մտաւորական կազմը:

Երբեքին վարագայ Արծիւը իր սի-
րիկ վաղապարականէն ու Տարուէն
խոստա զրկուելէ յետոյ երբ ինքզինք
սիրտը ներսառնէ մենարանին մէջ
կտաւ արգելափակ չը յուսահատեցաւ
քանի հայ ազգի ապագային մասին
այլ կողմէր հոն ծերունի Սիմէոնի
մօտ՝ Հայաստանի Մեծիային գաղութ-
տը ողջունելէ յետոյ միայն «Տէր արգ
տարածակա զհոգի իմ» կոչելու միակ
բաղձանքով:

Ընդհանուր հայութեան պատգամա-
տեանը քունները երբ զինք Ս. Յա-
կոբայ մենաստանէն Արարատեան վե-
հարանը հրաւիրեցին եւ ամենայն Ռու-
սոց Չարը իր պաշտպանութեամբ զԱ-
նի հայրապետական բարձրագոյն Ա-
թոռին վրայ հաստատեց, ինք ա'լ մօ-
տեցած կը զգար այն երջանիկ օրը,
յորում իր փայփայած յոյսին պսա-
կի մը պիտի վայելէր, իր զոգողուն
մատուց օծելու առաջին հայ իշխանին
ճակատը: Հայրիկը առողջ էր այդ օ-
րերը, կը խայտար էջմիածնայ վեհա-
րանին մէջ ու իր երեւոյթովը կը խոս-
տատար տակաւին քառօրդ դարէ ա-
ւելի ապրիլ:

Բայց աւագը, քիչ յետոյ հայուն ճա-
կատողիւր ստուերով ամպերը սկսան

ՑԱՒԱԼԻ ԳՈՅԺ

Թաղական Խորհուրդս անկախագրելի վշտով կը պատրաս-
տուի յայտարարելու Վառնայի հայ հասարակութեան՝ Հայ ազգին
Մեծ Ուսուցիչ, Մեծ Քարոզիչ, Մեծ Գործիչ ու միանգամայն Մեծ
Հայրենասէր Ամենայն Հայոց Կաթողիկոս ՄԿՐՏԻՉ ԽԻՄԵՆՔԻ
Հայոց Հայրիկի վրդովեցուցիչ մահը:

Միեւնոյն ատեն կը յայտարարէ Թաղակ. Խորհուրդս՝ թէ
սկսած է իւր պատրաստութիւնները յայտնող կիւրակէ, Նոյնմբեր
11-ին վայելչապէս կատարել մեծ հանգուցեային հոգեհանգստ-
եան պաշտօնը:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԵՆ

ԲԱՂԷՇԷՆ ԴՐՈՇԱԿԻՆ հազարգում
տեղեկութեանց նայելով այդ նահանգի
եւ Սղերդ գաւառի քրիստոնէի վի-
ճակը շատ ծանր է: Տեղւոյն հայ Ա-
ռաքնորդը, Կաթողիկոս եպիսկոպոսը
եւ Ասորոց Պատր. Փսխանորդը Մեծ-
եպարզօրին հեռագրի - խնդրանքներ
տուած են Ահա թարգմանութիւնը այդ
հեռագրներէ մէկին:

Վաճա. Սեծ-Եպարզօրութեան
Կ Պօլիս

«Մեր նահանգին մէջ գտնուող հա-
ւատարիմ ժողովրդան» անպատիժ ու
վերջին ծայր չփայցած-լրացած աշի-
րէթներուն ձեռքէն կրած հարստահա-
րութիւններն այլեւս վերջին աստի
ճանի հասած են: Ապանւողներուն
թիւը ու հաշիւը չը կայ: Քրիստոնէին
ամէն ժամուան մէջ եւ ամէն կողմ
համարձակ ի գործ դրած տեսակ-տե-
ստիկ շարագործութեանց իրենք՝ քրիս-
տոնեաները այլեւս իրենց կեանքին,
հոգին ինչքին, պատանին տէրը չեն:
հարագործները ճաճանքները կը
լալնուն համար ներածութիւն եւ ար-
տածութիւն դադրած՝ զեղօրէից բնակ
չուծիւնն ալ քրիստոնէի ճնշման տակ
իրենց ցանքերն վերցնելու եւս ան-
կարող են: Այլուր գողթելու տրա-
մադգութիւններն գործադրելու վրայ
են: Վեհ. Կայսեր կամքին հակառակ
եղող քրիստոնէն այս արարքներն
արգելելով՝ հանրութեան անդորրու-
թիւնը վերահաստատելու շուտափոյթ
միջոցի գործադրութեան համար կայս-
անվերջ գիւղականաց ապաւինելով ի
գիմաց ժողովրդեան ձեր վսեմութեան
հրամանին կապանք:

Հայոց Առաջնորդ
Սղերդի Կաթող. Եպ.
Ասորոց Առաջ. Փոխ

Նոյնը աւելի մանրամասնութեամբ
հեռագրած է Սղերդի քաղաքային Ապ-
տիւլ Բէգազը:

ՄԵՈՅ Առաքնորդ. Տեղապահ Կորիւն
վարդապետ եւ Վեհեղ քահանայ վա-
տութիւնը ունեցել են ստորագրելու
միւլէտաւորին խմբագրած մէկ հեռա-
գրը, որով շնորհակալութիւն կը
յայտեն Սուրբանին - Դեղորդ Չա-
վուշի խումբը ջնջել տուաւ. այդ խմ-
բին կը վերագրեն սա ոճիրները. «հայ
երկրագործ ժողովուրդը կեղեքող ու
սպաննող, միամիտ ժողովուրդին ու-
սան պատակութեան, հրաւիրող եւ ըս-
տիպող, հայ ազգիկներ առեւանգող,
ժողովրդեան Ամերիկայ գաղութելու մի-
ակ պատճառ եղող հետքն»:

Վարդապետին վատութիւնը իմանա-
լով, ժողովուրդը զանի Առաքնորդա-
րանէն վնասուի է. նա քանի մը օր
որբանոց ապաստանելէ յետոյ Բաղէշի
կուսակալին հովանաւորութեամբ կա-
րին փախադուրեւ է:

ԱՄԲԻՆԻՆՔԻ Սեպտ. 20 Թուականին նոյն
թիւթիւն ստացած մէկ նամակին նա-
յելով, Ակնի եւ չը կատարող գրութիւնը
ստորագրել է հեղուր Չինուորները
թուրք եւ քրեւտ կը փախին եւ չեն
ուզել քալել Տէրսիմի վրայ: Չէքի
նայան Երիզան 6 վայր դորքով 4
թագանովով եւ 30 բոն քարուղով
Տէրսիմի վրայ արշաւել է:

Ակնայ շուրջը քրեւտները կը գրա-
ւեն ջորի. դրամ եւայլն, ըսելով «մեզի
այժմ թէ դրամ պէտք է եւ թէ ջորի
մենք պատերազմ ունինք» Գաւառին
թէ թուրքերը եւ թէ հայերը յոստ-
հատած են կառավարութեան պաշտ-
պանութեան եւ կը սպանան եւրո-
պական հակողութիւն պահանջել: (Ինչ
պահանջ չէ եթէ ստոյգ է):

Ակնայ վերջին հրդեհէն զլիստորա-
պէս թուրքերը վաճառած են: հայե-
րուն վեհաք 100 թն 10ը կը հաշուուի:
Հրդեհի միջոցին Ակն գտնուող 80
չափ Տէրսիմի քրեւտներ մասնաւո-
րապէս թուրքերու խանութները գո-
ղովաւ են: Քաղաքէն դուրս ալ Տէր-
սիմի քրեւտներ, կըսէ նամակագիրը
«մինչեւ օրս 32 թուրք եւ երկու հայ
գրեղներ թաւաւած են: բայց հայերը 9)
ոսկի տալով ետ առած են իրենց ա-
նամուկները: Քրեւտները սպանւած են
6 թուրք եւ 11 գրեղուր. դրամ եւ
մատուցէր հրացանները ու փամփուշտ-
ները: Նաեւ ճամբու վրայ սպանուած են
Իպրանիմ եւ Անմեւ Ֆէյզի ջորեպետ-
ները, որոնցմէ 42 ջորի եւ 2000 ոսկի-
ապրանք գրաւած են: Թուրքերը լա-
ւով Կարին հրապատնեններուն կը դի-
մեն:

Նոյն գրութիւնը կը տիբէ, կըսէ նա-
մակագիրը, Չարշանճագի մէջ, ուր մո-

